ՀԱՅՈՑ ՎԻՊԱԿԱՆ ԱԱԹԵՆԻԿ ԹԱԳՈՒՀՈՒ ԿԵՐՊԱՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

ՏՈՐՔ ԴԱԼԱԼՅԱՆ

Հայոց Պատմահոր վկայությամբ՝ II դ. հայերի և հյուսիսային լեռնական ցեղերի միջև հաստատված դաշինքն ամրապնդվում է Մեծ Հայքի թագավորի և ալանական արքայագստեր ամուսնությամբ[1]: Հայերն իրենց թագուհուն կոչում էին Սաթենիկ *կամ* Սաթինիկ *(հմմտ. հայ. Վարս-ենիկ, Նազ-ենիկ անձնանունների կազմությունը): Սաթենիկին վերագրվել են զանազան առասպելական պատմություններ, ինչպես և նրա հետ կապված գեպքերը մեկնաբանվել են գիցաբանական կաղապարներով[2]:*

Սաթենիկի շուրջ հյուսված առասպելներն անքակտելիորեն մտել են հայոց հնագույն վեպի՝ «Վիպասանքի» շարադրանքի մեջ, որի առանցքային կերպարներից է Արտաշես-Սաթենիկ ամուսնական զույգը[3]: Սաթենիկի «ցիկլն» անբաժանելի է հայոց հնագույն վեպի ընդհանուր կառուցվածքից, մյուս կողմից, նրա մասին հյուսված առասպելախառն պատմությունները աներկբայորեն համահունչ են հյուսիսկովկասյան և հատկապես՝ օսական Սաթանայի՝ մեր օրերում գրառված վիպական գրվագներին: Վերջիններիս բազմաթիվ տարբերակներն ու ընդարձակ պատումները, նաև՝ տարբեր հյուսիսկովկասյան ժողովուրդների հավատալիքներում պահպանված զուգահեռները ապացուցում են այդ առասպելների արխաիկությունն ու բնիկությունը կովկասյան տարածաշրջանում: Ավելին, Վ. Աբաևը միանգամայն հավանական է գտնում ընդհանուր հայ-ալանական վիպական շաքի գոյությունը[4]:

Ինչևէ, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն», ըստ էության, ոչ միայն բացառիկ պատառիկներ է պարունակում հայոց հնագույն վեպից՝ «Վիպասանքից», որոնք Պատմահայրը մեջբերում է տվյալ դաբերի պատմությունը շարադրելիս, այլև նա անուղղակիորեն ակնարկում է՝ առնվազն V դ. ալանական ժողովրդական վեպի գոյության մասին, որի պատումները հետագայում իրենց արտացոլումն են գտել օսական «Նարթյան» դիցավեպում:

---

1 *Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն հայոց (աշխատասիրությամբ Ստ. Մալխասյանի). II Տ, Երևան, 1981, էջ 210-214: Խորենացու համաձայն՝ Սաթենիկն Արտաշեսի կանանցից առաջինն է դառնում [էջ 214], այսինքն՝ նա էր համարվում հայոց թագուհի:*

2 М. Э л и а д е. Космос и история. М., 1987, с. 33.

3 *Մ. Ա բ ե ղ յ ա ն. Վիպասանք.– Երկեր. հ. Ա, Երևան, 1966, էջ 170-174:*

4 В. И. А б а е в. Нартовский эпос. – Известия Северо-Осетинского научно-исследовательского института (*այսուհետև՝* ИСОНИИ), т. 10, вып. 1, Дзауджикау, 1945, с. 43; Т. А. Г у р и е в. К вопросам ономастики осетинского нартовского эпоса. – "Осетинская филология" (Ирон филологи). Межвузовский сборник статей, вып. 1 (*այսուհետև՝* ОФ), Орджоникидзе, 1977, с. 53.

Քանի որ օսական ժողովրդական վեպը դրի է առնվել վերջին հարյուրամյակների ընթացքում, բնականաբար, դրանում հանդես եկող հերոսների կերպարները պահպանվել են զուտ դյուցազնական մակարդակով: Սովորական հերոսների կողքին առկա են քրիստոնեական աստվածությունների ու սրբերի կերպարներ, որոնք իրենց կարդավիճակով ավելի բարձր են մահկանացու դյուցազուններից: Միևնույն ժամանակ, ակնհայտ է, որ բոլոր այդ կերպարներն արտացոլում են հեթանոսական համապատասխան աստվածների բնորոշ դծերը, որոնց պաշտամունքը ժամանակին տարածված էր օսերի նախնիների՝ ալանների մեջ: Ֆրանսիացի հնդեվրոպագետ և դիցաբան Ժ. Դյումեզիլը, օսական «Նարթյան» դիցավեպի կերպարների վերլուծությունը կատարելիս, հենց այս տեսանկյունից է մոտենում խնդրին[5]: Որոշ հանդուցային կերպարների ծագումն անդամ արմատներով հասնում է մինչև սկյութական դարաշրջան: Նույնը վերաբերում է նաև մյուս հյուսիսկովկասյան ժողովուրդների դիցավեպերին, որոնց հիմնական կերպարների հնությունն անվիճելի է: Հաշվի առնելով ասվածը՝ միանդամայն բնական է, որ կովկասյան «Նարթյան» դիցավեպի կերպարները իրենց զուգահեռներն ունեն հինարևելյան՝ ցեղակից և ոչ ցեղակից այլ ժողովուրդների հավատալիքներում:

Օսական «Նարթյան» դիցավեպի կենտրոնական կանացի կերպարը կոչվում է Սաթանա, *որի մասին սլաամվող բազմաթիվ առասպելների հարևանցի քննությունն իսկ թույլ է տալիս եզրակացնել, որ Սաթանան օսերի ամենասիրված ու պաշտված դիցուհին էր: Նրա անունն, ըստ ամենայնի, դրեթե նույն կերպ էր հնչում տակավին ալանական դարաշրջանում, ինչը բազմաթիվ հետազոտողների հիմք է տվել Սաթանայի անունը նույնացնելու հայոց թագուհի Սաթենիկի անվան հետ[6]: Այն կարծիքը, թե օսական Սաթանայի առասպելական շարքը հյուսվել է հայոց Սաթենիկ թագուհու դիցական կերպարի ազդեցությամբ[7], որոշ չափով վերաբերում է նաև արևմտակովկասյան զուգահեռներին, որոնք, սակայն, առավել շատ են պահպանել վաղնջական այնպիսի հատկանիշներ, որ բացակայում են հայկական ավանդույթում:*

Սաթանայի անունը օսերենով չի ստուգաբանվում[8]: Կերպարը զուգահեռներ ունի «ալանական ոլորտի» ժողովուրդների դյուցազնական ասքերում. ադըղները (այդ թվում՝ կաբարդիններ, չերքեզներ), ինչպես նաև սվաններն ու բալկարները Սաթանային կոչում են Սաթանեյ, Սաթանայ

---

5 Ж. Дюмезиль. Осетинский эпос и мифология. М., 1976.

6 Д. Лавров. Заметки об Осетии и осетинах.— "Сборник материалов для описания местностей и племен Кавказа" (*այսուհետև՝* СМОМПК), вып. III, Тифлис, 1883, отдел I, с. *189. Առաջինը* Սաթենիկ *և* Սաթանա *անունները համադրել է Դ. Լավրովը, սակայն նա որևէ կերպ չի փորձում ստուգաբանել այդ անունների ծագումը: Երբեմն* Սաթանա *անունը համադրվում է սկյութա-սարմատական* Satti(o)nos *անձնանվան հետ, որը հիշատակվում է մերձպոնտական հունատառ վիմագրերում* (Т. А. Гуриев. ОФ, с. 53):

7 В. И. Абаев. Историко-этимологический словарь осетинского языка (*այսուհետև՝* ИЭСОЯ). Т. III, М. 1979, с. 39.

8 *Վ. Աբաևը, դժվարանալով որևէ ստուգաբանություն տալ* Սաթանա *դիցանվանը, մեջբերում է Հ. Բեյլիի կարծիքը՝ առանց անվերապահորեն ընդունելու այն* (В. И. Абаев. *Նշվ. աշխ., էջ 39):*

կամ Սաթանոյ, *աբազները և ուբրխները՝* Սաթանեա *և* Սաթանիա, *աբխազները՝* Սաթանեյ-Գուաշա *կամ* Սաթանիա-վՀա, *վայնախները՝* Սելա Սաթա *կամ* Սաթայ խան: *Ամենուրեք կերպարն օժտված է մայր աստվածուհու հատկանիշներով:*

Օսերի Սաթանան *կամ* Շաթանան[9] *աննման գեղեցկությամբ ոսկեծամ կին է, որի խոսքերը արևի ճառագայթներից էլ ուղիղ են ու թրից էլ սուր: Յոթհարկանի աշտարակին նսած՝* Սաթանան *իր երկնային հայելու (*arvə aydæn*) մեջ տեսնում է աշխարհում կատարվողը, և ոչինչ չի վրիպում նրա աչքերից*[10]*: Սաթանայի մուշտակը ոսկուց է, պատվավոր գահավորակն է նրա նստատեղը. նա կանանցից լավագույնն է, իսկ նրա ամուսինը լավագույնն է տղամարդկանց մեջ (*lœg xwəzdœr – Wərəzmœg, ūs xwəzdœr – Satana*): Հայտնի օսական առածն ասում է՝ «մի բարձի ծերանաք, ինչպես Վերըզմագն ու Սաթանան»*[11]*: Օսերը մինչ օրս լավ տանտիրուհիներին և խելացի կանանց կոչում են* Սաթանա *կամ* не 'фсин Сата'на (ne 'fsin Satana) «մեր աիրուհի Ստթանա», *իսկ ինքը՝* Սաթանան, *վիպական պատումներում հաճախ անվանվում է* æxsinæ-æfsinæ «տիկին-տիրուհի»: *Այս բոլոր մակդիրները միանգամայն նույնական են հայոց գիցաբանության* «մայր ամենայն զգաստութեանց», «Ոսկեմայր», «Ոսկեծին», «Ոսկեհատ» *տիկին Անահիտի տիտղոսներին*[12]*: Հետաքրքիր է, որ աբխազական նարթյան պատումներում էլ* Սաթանեյ-Գուաշան *իր խելքի և գեղեցկության համար կրում է «ոսկե տիրուհի» տիտղոսը*[13]*:*

Աբխազների Սաթանեյ-Գուաշան *(«Սաթանեյ-իշիանուհի») եզակի տարբերակներում կոչվում է նաև* Երիուարա, Գուաշախան *կամ* Սականիա խանգուաշան[14]*: Ըստ աբխազական նարթյան պատումների՝ նա մի գյուցազնուհի է՝* Հայխուզ *կամ* Խարխուզ *առասպելական ցեղից, որի ներկայացուցիչները ժամանակին իրենց ուժով գերազանցել են անգամ նարթերին, նրանք կոչվում են նաև նարթերի եղբայրներ*[15]*: Աբխազ ծերունիները երկլարանի ազգային գործիքի (ափխարցա) վրա նվագելով ու երգելով՝ առասպելաբա-*

---

9 *Օսերեն* /s/ *և* /z/ *չփականներն իրենցից ներկայացնում են* /s/, /z/ *սուլականների և* /š/, /ž/ *չչականների միջև գտնվող անցումային ձևեր. միայն դիգորական բարբառում և իրոնական որոշ խոսվածքներում են դրանք հնչում որպես մաքուր սուլականներ: Տե՛ս* Основы иранского языкознания (новоиранские языки: восточная группа). М. 1987, с. 558; Д. Г. Бекоев. Особенности двальских сокающего и шокающего говоров Северной Осетии. — ОФ, с. 22—28.

10 Нартские сказания (осетинский народный эпос), М., 1949, с. 27; Б. А. Калоев. Мифы народов мира: энциклопедия (*այսուհետև՝* МНМ), т. II, М. 1992, с. 414.

11 В. И. Абаев. Из осетинского эпоса, 10 нартовских сказаний: текст, перевод, комментарии (*այսուհետև՝* ОЭ), М.—Л., 1939, с. 40; В. И. Абаев. *Նշվ. աշխ., էջ 39;* В. И. Абаев. ИСОНИИ, т. 10, вып. 1, с. 37.

12 *Ագաթանգեղայ պատմութիւն հայոց (աշխատասիրությամբ Ա. Տեր-Ղևոնդյանի). Երևան, 1983, էջ 40, 452:*

13 Л. Х. Акаба. Из мифологии абхазов. Сухуми, 1976, с. 12.

14 Ш. Д. Инал-Ипа. Памятники абхазского фольклора. — Сборник статей и материалов. Сухуми, 1977, с. 21, 32; Ш. Х. Салакая. Абхазский нартский эпос. Тбилиси, 1976, с. 179.

15 Ш. Д. Инал-Ипа. *Նշվ. աշխ., էջ 29:*

նում էին, թե ինչպես է Սաթանեյ-Գուաշան ոտքի հարվածով տապալում ծառը, իր շուռ տված ժայռաբեկորի մեջ մատով անցք բացում և դրանցից սարքած ճախարակով մանում բուրգն ու կարում իր հարյուր որդիների զգեստները: Նրա մանելու ժամանակ նարթերի քարե տունը ցնցվում է, Սաթանեյն այնքան ուժեղ է, որ միայն նա է կարողանում բարձրացնել նարթերի քարե նստարանը (արըմձ)[16]: Հին պատումներում Սաթանեյ-Գուաշան չամուսնացած հրապուրիչ կին է, որը մոգական ուժի է տիրապետում, կանխագուշակ է ապագան և, անհրաժեշտության դեպքում, կարող է ներազդել անգամ եղանակի վրա՝ անձրև, կարկուտ և քամի առաջացնել[17] (մանելուց ցնցվող տունը նույնպես ամպրոպային առասպելի արձագանք է):

Ադըղների Սաթանեյը, նմանապես, նարթերի ղերդաստանի մեծ մայրն է ու գլխավոր խորհրդատուն. նա միշտ դերակրական գիրք ունի ամուսնական հարաբերություններում՝ իր բոլոր կողակիցների՝ Սոսի, Թլեփշի, Վագըրմեսի և մյուսների հետ: Սաթանեյն օժտված է կախարդուհու և դուշակի հմայական դծերով, նա բույսերից թունավոր դեղեր (ուդ) է պատրաստում[18]. այս կապակցությամբ հետաքրքիր է, որ հայոց Արտաշեսը Սաթենիկի համար կառուցած ամրոցում տնկել է տալիս մի մեծ ծաղկանոց «դեղեր ստեղծելու համար, համաձայն Էսկուլապի հնարիմաց վարդապետության»[19]:

Ինգուշների Սելա Սաթայի ամենահայտնի առասպելներից մեկը կապված է երեք աստղերի և Ծիր Կաթինի հետ. վերջինս, իբր, առաջացել է այն տեղում, որտեղով Սելա Սաթան հարդ է տարել իր ամուսնու կամ սիրեկանի համար, որը ենթադրաբար ամպրոպի աստվածն է[20]: Ուշագրավ է, որ Ծիր Կաթին աստղաբույլն ինգուշները կոչում են հայերի նման՝ Ча токхадаь мотт «Հարդի ճանապարհ»: Սաթան, փաստորեն, հանդես է գալիս ինչպես հայկական ավանդության սանամայրը, որը հարդ է գողանում քավորի մարագից և, ամոթից բարձրանալով երկինք, առաջացնում Հարդաղոդի ճանապարհը[21]: Հարգի գնալուց առաջ Սաթան եռանկյունի հաց (bozolg) է թխում, և ահա այդ հացի անունով Սաթիբոժոլգ են կոչվում Վեգա, Դենեբ, Ալտաիր աստղերը[22], որոնք գտնվում են Ծիր Կաթինի երկու կողմերում: Ինգուշական Սաթայի անմիջական առնչությունը երկնային համաստեղությունների առաջացմանը բնորոշ է միայն վայնախական դի-

---

16 Նույն տեղում, էջ 10, 17, 61, Л. Х. А к а б а. Նշվ. աշխ., էջ 13, Ш. Х. С а л а к а я. Приключения Нарта Сасрыквы и его девяноста девяти братьев. Абхазский народный эпос, М., 1962, с. 21.

17 Ш. Х. С а л а к а я. Сатаней-Гуаша: МНМ-II, с. 414-415.

18 М. И. М и ж а е в. Сатаней: МНМ-II, с. 414.

19 Թ ո ւ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի և Ա ն ա ն ո ւ ն. Պատմություն Արծրունյաց տան. I Ը, Երևան, 1978, էջ 74:

20 Սաթան, որոշ պատկերացումներով, Սելա աստծո սիրուհին է (А. О. М а л ь с а г о в. Нарт-орстхойский эпос вайнахов. Грозный, 1970, с. 38, 45). Ըստ մեկ այլ տարբերակի՝ Սելա Սաթան հարդ է տանում իր որդու՝ Սեսկա Սոլսայի համար (А. О. М а л ь с а г о в. Նշվ. աշխ., էջ 47):

21 Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Ավանդապատում. Երևան, 1969, էջ 7–8:

22 А. Х. Т а н к и е в. Села Сата: МНМ-II, с. 424.

ցաբանությանը և չի հանդիպում Սաթանայի մյուս կովկասյան զուգահեռների առասպելներում:

Այժմ փոքր-ինչ մանրամասն կանգ առնենք Սաթանայի ծննդյան առասպելի վրա, որը սերտորեն կապված է երկվորյակների պաշտամունքի հետ և շատ գծերով կրկնում է հայոց համապատասխան դիցաբանական պատկերացումները: Օսական դիցավեպում Սաթանայի հայրը Վասսրրջին (Wastərji) կամ դիգորական բարբառով՝ Վաս Կերգին է՝ սուրբ Գևորգը, իսկ մայրը՝ ծովային աստված Դոնբետրրի (Donbettər) դուստրն է (Ձերաստ կամ Սասանա): Օսերը Վաստրրջիին պատկերացնում էին սպիտակ ձիու վրա նստած, սպիտակագդեստ ծերունու կերպարանքով, որը հաճախ իջնում է երկիր և խառնվում մահկանացուների գործերին[23]: Այսպիսով, Սաթանան իր ծագումով արդեն կիսածովային, կիսաերկնային էակ է:

Օսական «Նարթյան» դիցավեպում պատմվում է, թե ինչպես Դոնբեարրի գեղեցկուհի աղջիկը ծովի հատակին ամուսնանում է Նարթերի հղոր դյուցազնի՝ Ախսարթագի (Æxsærtæg) հետ, որից ծնում է Վերրզմադ և Խամրց երկվորյակներին[24]: Դուրս գալով ծովից՝ նորապսակներն ափին տեսնում են Ախսարթագի երկվորյակ եղբոր՝ Ախսարի (Æxsær) վրանը. եղբայրները չեն ճանաչում միմյանց և, թյուրիմացաբար, աղջկա պատճառով, սկսում են ծովափին մենամարտել, արդյունքում երկուսն էլ զոհվում են: Որոշ տարբերակներում զոհվում է միայն մեկ եղբայրը, իսկ մյուսն ամուսնանում է ստորջրյա թագավորությունում[25]:

Դոնբետրրի աղջիկը սկսում է լալ, հանկարծ հայտնվում է Վաստրրջին, հանգստացնում նրան և մի կոթող կանգնեցնում երկվորյակ եղբայրների (կամ եղբոր) շիրիմի վրա: Ձերասան խոստանում է ամուսնանալ Վաստրրջիի հետ՝ ի հատուցում նրա մատուցած ծառայության, սակայն լվացվելու պատրվակով գնում է ծովափ և նետվում Ծովը՝ խորասուզվելով իր հայրական տունը: Վասաբրրջին սպառնում է (Hæy, dodovag dæ k'ona! «Հայհա՛յ, վերջ քո օջախին») և երդվում մեռյալների աշխարհում գտնել ծովային կնոջը: Մեռնելիս կինը պատվիրում է իր որդիներին՝ գերեզմանի մոտ հսկել, սակայն, մահվանից երեք օր անց, Վաստրրջիին հաջողվում է դամբարանում մերձենալ նրան: Վաստրրջին իրենից հետո կնոջ մոտ է բաց թողնում իր նժույգին և շանը. մեկ տարուց Դոնբետրրի աղջիկը ծնում է աղջիկ (Սաթանա), նժույգ (Արֆան, Դուռդուռա կամ Ձեսան) և շուն (Սիլամ)[26]: Սաթանան դառնում է կանանցից լավագույնը, իսկ նժույգն ու շունը սկիզբ են դնում ազնվացեղ ձիերի ու շների տոհմերին:

---

23 А. Б. Дзадзиты, Х. В. Дзуццаты, С. М. Хъараты. Ирон адæмы этнографи æмое мифологи: цыбыр дзырдуат (Этнография и мифология осетин: краткий словарь). Владикавказ, 1994, с. 149.

24 Այս մոտիվը՝ երկվորյակներն իրենց կնոջից ունենում են նույնպես երկվորյակ որդիներ, հանդիպում է «Սասնա ծռերի» մի քանի տարբերակներում, «Մահաբհարատայում» և այլուր (տե՛ս Л. А. Абрамян. Первобытный праздник и мифология. Ереван, 1983, с. 148):

25 В. И. Абаев. ОЭ, с. 75, комментарий 37.

26 Н. Мамиева. Образ Сатаны в публикациях осетинского нартского эпоса. Орджоникидзе, 1964, с. 26-30; В. И. Абаев. ОЭ, с. 15-17, 20-21.

Արֆանը դառնում է Սաթանայի ամուսնու (Վըրըզմագի) երիվարը: Օսերը Ծիր Կաթին աստղարույլը կոչում են «Արֆանի հետք» (Ærfœnɔ fœd) և հավատում, որ այն առաջացել է Վըրըզմագի նժույգի հետքից, որը վարդում էր երկնքի և ամպերի միջև[27]: Սաթանայի հետ միաժամանակ նույն մորից ծնված Արֆանն այստեղ, կարծես, փոխարինում է Սաթանային: Ծիր Կաթինի առաջացման օսական առասպելի մի տարբերակում Արֆանը դնում է հարդ զաղանալու և, խուճապահար փախչելիս, հարդը նրա թևաակերից թափվում-սարածվում է երկնքով, ինչից էլ առաջանում է Հարդազողի ճանապարհը[28]: Վերջինս ամենուրեք հայկական և կովկասյան տարբերակներում, կապվում է հարդի, երկնային տիրակալի, նրա հակառակորդ կայծակի աստծո և վերջինիս երիվարի կամ սիրուհու (կնոջ) հետ, որի հատկանիշներն արտացոլված են Սաթանայի (Սաթայի) կերպարում: Սաթանայի «եղբայր» Արֆանը համապրելի է հայոց դիցավեպի հրաշագեղ նժույգին, որի ծնունդը մի զրույցում նույնպես կապվում է ծովային կույսի հետ[29]: Արխազական տարբերակներում հրեղեն նժույգի արաշի ծնունդը կապվում է Սաթանեյ-Գուաշայի «կեսավինյա արկածի» և նրա քարածին «որդու» ծննդյան հետ:

Վայնախական Սելի Սաթան ծնվում է օսական Սաթանայի նման՝ մեռած մորից (անանուն): Վաստըրջիի դերն այստեղ կատարում է Սելան *(Սելի, Սթելա)՝ երկնքի աստվածը, երկնային կրակի տիրակալը, որի անունով էլ կոչվում է նրա դուստրը (*Սելա Սաթա «Սելայի դուստր»*): Սելան երկար ժամանակ սիրահետում էր նարթ-օրսթխոյների ցեղից մի աղջկա՝ Սաթայի մորը, սակայն վերջինս մերժում էր Սելայի սերը, ի վերջո, աղջկա մահվանից հետո, Սելան կենակցում է նրա հետ դերեզմանում: Համանման մի առասպելի համաձայն՝ հերոսը (Օրզմին կամ Օրշամար Էրշ) գերեզմանում պառկում է իր մեռած սիրուհու հետ, որին երդվել էր երբեք չբաժանվել նրանից: Տեսնելով, թե ինչպես իր սպանած օձը դեղաբույսերով կենդանացնում է մյուս օձը, նա կյանքի է վերադարձնում իր սիրուհուն: Օսական առասպելում նույնպես Վաստըրջին, նախքան կենակցելը, կենդանացնում է Ձերասային իր կախարդական մտրակով, որն ամպրոպային առասպելներում նույնանում է օձի հետ: Այսպիսով, Սաթանայի ծնունդը նկարագրվում է որպես ամպրոպային գործողություն՝ երկնքից (գերեզմանա)քարի վրա իջնող կայծակի (աստծո) տեսքով: Վայնախական տարբերակում աղջկա գերեզմանի պահապանն արթնանում և սկսում է նետահարել փախչող Սելային, որի ներքին օրգանների տրաքելուց ամպրոպ է առաջանում[30]:*

---

27 Б. А. Калоев. К вопросу об отражении мировоззрения древних осетин в нартском эпосе. — ОФ, с. 88.

28 Как нарты хотели опоить Урызмага. — Памятники народного творчества осетин (*այսուհետև՝* ПНТО), вып. 1, Владикавказ, 1925, с. 74.

29 *Սանդուխտը ալևոր ծերունու խորհրդով (հմմտ. օս. Վաստըրջի) գնում է զբոսնելու, խմում աղբյուրի ջրից և հղանում երկվորյակներին. նույն ջրից խմում է Սանդուխտի ձին և հղանում Քուռկիկ Ջալալուն (Սասնա ծռեր (խմբագրեց՝ Մ. Աբեղյան, աշխատակցությամբ Կ. Մ.-Օհանջանյանի). Երևան, 1951, էջ 392):*

30 *Սելայի վրա նետեր արձակողը* Սեսկա Սոլսան *է* (А. О. Мальсагов. *Նշվ. աշխ., էջ 44, 63–64):*

Որոշ պատկերացումներով՝ Սելան երեք տիկ ունի, որոնցից մեկի մեջ խավար դիշեր է, մյուսի մեջ՝ սառնամանիք, երրորդի մեջ՝ ձնաբուք: Սելան, իրենից փախչող հերոսին հետապնդելիս, հերթով բացում է այդ տիկերը, ինչի արդյունքում առաջացած սոսկալի փոթորկից Արգուն դետի ջրերը դուրս են գալիս ափերից, արմատախիլ վիթխարի սոսիները ծղոտի նման սավառնում են օդում (հմմտ. հայկական «Հարղագողի ճանապարհի» առասպելում քամին երկնքով ցրում-տարածում է հարդը): Վերջում Սելան կայծակ-նետեր է արձակում հերոսի ետևից, սակայն արևադեմ Սաթան, սպիտակ թռչունի՝ սիրոլի (иволга) կերպարանք առած, օգնում է նրան, և Սաթայի շնորհիվ աստվածամարտիկ հերոսը Սելայի օջախից դողացած խանձողը հասցնելով քարանձավ՝ նարթերին կրակ է պարգևում[31]: Հետազոտողները վաղուց արդեն այս առասպելը համեմատել են երկնային աստծո կրակը գողացող Պրոմեթևսի առասպելի հետ[32]: Հետաքրքիր է, որ վայնախական առասպելում կարևոր դեր է խաղում երկնային աստծո դուստրը՝ Սաթան, որի հետ էին ինդուշները կապում նաև Ծիր Կաթինի առաջացումը:

Կովկասյան մյուս ժողովուրդներից Սաթանայի ծննդյան օսական առասպելը հիշեցնող մի պատում կա նաև սվանների մեջ. եղբայրները սպանում են միմյանց, և նրանց կրտսը, որը պետք է ամուսնանար սուրբ Գևորգի հետ, այդ ամուսնությունից խուսափելու համար մտնում է գետը ու վերածվում փրփուրի, իսկ ապա գուրս է գալիս ջրաղացում՝ նորից մարդակերպ, և ծնում որդիներ, որոնց տատն, ի դեպ, կոչվում է Սաթանա[33]: Այստեղ, ակնհայտորեն, մոռացվել կամ խառնվել են անունները, և դեպքերը նկարագրված են խիստ դրվագայնորեն:

Հայոց դիցաբանության մեջ ամպրոպի աստծո սիրուհու՝ Աստղիկի ծննդյան համառոտ առասպելը որոշ դեպերով հիշեցնում է Սաթենիկ-Սաթանայի ծնունդը նկարագրող պատումը: Ըստ միջնադարյան մի ձեռագրի՝ Աստղիկը ծնվում է ծովից (=Ծովինարից)՝ այն բանից հետո, երբ երկու երկվորյակ եղբայրները մենամարտում են: Արամազդն իր անանուն երկվորյակ եղբորը սպանում ու նետում է ծովը, ջրերն ալեկոծվում են, և փրփուրների միջից դուրս է գալիս Աստղիկը[34]. փրփուրն այստեղ ընկալվում է որպես Աստղիկի մայր ծովային դիցուհու փոխակերպում, որն ալեկոծվում-խռովվում է իր երկվորյակ որդու սպանությունից (հմմտ. սվանական վերոնշված առասպելում՝ կնոջ վերածվելը փրփուրի):

---

31 А. Х. Танкиев. Села: МНМ-II, с. 423-424; А. О. Мальсагов. *Նշվ. աշխ., էջ 40–42. Հմմտ. հայկական առասպելը, ըստ որի՝ Վահագնը գողանում է երկնային աստված Իարշամի հարդը, վերջինիս քրիստոնեական հետնորդը սոսկալի քամի ու փոթորիկ է բարձրացնում կամ կայծակ-նետերով հետապնդում է կրակի հրամազ աստծուն:*

32 П. Салмаши. К изучению кавказских вариантов мифа о Прометее. Будапешт, 1968; G. Charachidze. Promethee ou le Caucase. Paris, 1986.

33 Ш. Дзидзигури. Грузинские варианты нартского эпоса (исследования, тексты). Тбилиси, 1971, с. 88-89.

34 *Ռ. Համբարձումյան. Հայկական տոմար. Երևան, 1992, էջ 15-16: Այս ձեռագիրը գտնվում է Երուսաղեմի սուրբ Հակոբյանց հայոց վանքի դրադարանում: Հմմտ. նաև հունական Աֆրոդիտեի (հռոմեական Վեներայի) ծնունդը ծովի փրփուրից:*

Հայոց դիցավեպի մերօրյա տարբերակներում երկվորյակներից մեկը, ջրային ձիուն հեծած, դուրս է դալիս ծովից, և հարազատ եղբայրը չի ճանաչում նրան[35]: Երկվորյակների մենամարտը, հաճախ՝ աղջկա համար, տարածված պատում է հնդեվրոպական ազգերի առասպելներում[36]: Հայոց դիցավեպում երկվորյակ դյուցազուններ Սանասարն ու Բաղդասարը մենամարտում են գեղեցկուհի աղջկա պատճառով, նրանց փորձում է բաժանել Ծովինարը՝ ահեղաձայն դոռալով. «Օ՛սարեր, օ՛ քարեր, օ՛ թփեր, ջուար տարեք քեռուն, թող դա հասնի իր փահլևաններուն»[37]:

Ծովինարը կերպարով և անվամբ միանգամայն համապատասխանում է օսական ծովային աստված Դոնբետերի աղջկան (Ձերասային), որոնք երկուսն էլ մարմնավորում են ծովային տարերքը: Ծովինարին նույնպես բռնի կնության են առնում, նա էլ, Ձերասայի նման, բռնի ամուսնությունից առաջ ուղևորվում է ծովափ և, շորերը հանելով, մտնում է ջուրը՝ այնտեղ հղանալով իր ապագա երկվորյակ զավակներին, ինչպես Ձերասան ծովի տակ պսակվում է Ախսարթագի հետ և հղանում իր ապագա երկվորյակ որդիներին: Հայկական մի տարբերակում երկվորյակ եղբայրների մայրը (=Ծովինարը), նրանց ծնելուց առաջ կամ հետո, իրեն նետում է Սևանա լիճը, որպեսզի խուսափի բռնի ամուսնությունից, սակայն կենդանի է մնում[38] (հմմտ. Վաստըրջիից խուսափող Ձերասայի նետվելը ծովի մեջ): Ծովից (=ծովային կույսից) են ծնվում օսական Սաթանան և նրա ամուսին Վըրըզմագը, ինչպես և Ասաղիկն ու նրա սիրեկան Վահագնը:

Պատահական չէ, հավանաբար, որ Սաթանայի ծննդյան առասպելում ակնարկ կա Սաթանայի և Լուսաստղի համադրման մասին. երբ երկնքում հայտնվում է Արուսյակ մոլորակը (Bonværnon), Վաստըրջին գերեզմանում մերձենում է մեռած Ձերասային՝ Սաթանայի մորը[39]: Այսպիսով, Սաթանան, թերևս, նույն շարքի մեջ է կանգնում Վեներա մոլորակը խորհրդանշող Աստղիկի և նրա հինարևելյան համարժեքների հետ: Այս համատեքստում պատահական չպետք է համարել նաև այն, որ կարարդական մի պատումում Սաթանեյը կոչվում է Իշթար-Սաթանեյ (Иштарь-Сатанэй)[40]:

Ծովային դիցուհուց ծնվող սիրո և գեղեցկության աստվածուհին հայտնի էր հինարևելյան տարբեր դիցաբանական համակարգերում, ընդորում, որպես կանոն, նրա ամուսինը ամպրոպի ու պատերազմի աստվածն էր: Սեմական ժողովուրդների մեջ աստվածային ամենապաշտելի այդ

---

35 Սասունցի Դավիթ (առաջաբանը, բառարանը և ծանոթագրությունները Ս. Բ. Հարությունյանի). Երևան, 1981, էջ 41–42:

36 В. И. А б а е в. Скифо-европейские изоглоссы на стыке востока и запада. М., 1965, с. 88—89.

37 Սասունցի Դավիթ, էջ 59· Մի տարբերակում Սանասարն արդեն Բաղդասարին սպանելիս է լինում, երբ Ծովինարը, կուրծքը բացած, նետվում է նրա թրի տակ (Սասնա ծռեր. հ. I, Երևան, 1936, էջ 882–884):

38 Սասնա ծռեր (պատումների գրառումները և բնագրի պատրաստումը՝ Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի, ԺԱ. Բաղդասար և Սանասար, պատմեց՝ մարտունեցի Մ. Գևորգյան). Երևան, 1979, էջ 445–447:

39 М. Т у г а н о в. Литературное наследие. Орджоникидзе, 1977, с. 139. Օսերի մեջ Արուսյակ մոլորակի և Իշթար դիցուհու համարժեքի պաշտամունքի մասին տե՛ս А. П а и а н и о. "Венера" в осетинском языке. — "Studia Alanica et Iranica". Rome, 1998, pp. 293–301.

40 Ш. Д. И н а л - И п а. Նշվ. աշխ., էջ 52:

զույգը կազմում էին Ասթարն ու Ասթարտան (բառացիորեն՝ «աստված» և «աստվածուհի»)[41]: Հյուսիսային Սիրիայում Ասթարտային համապատասխանում էր Շամիրամը, որի պաշտամունքը լայնորեն տարածված էր նաև հայերի մեջ: Նա, ի տարբերություն Աստղիկի, հայկական դիցաբանության տիպական սիրո խորհրդանիշն էր, հայտնի էր իր երկար ոսկեթել մազերով և հմայական հուռութքներով[42]: Չնայած Շամիրամ անվան սեմական ստուգաբանությանը, նրա կերպարն, ամենայն հավանականությամբ, ուներ մարական նախահիմքեր[43]: Նա համարվում էր կիսով ձուկ, կիսով կին ջրային դիցուհու դուստրը: Առասպելի համաձայն՝ Դերկետոն, կենակցելով մահկանացուի հետ, ծնում է մի աղջիկ, բայց ամաչելով իր մեղապարտ արարքից՝ ոչնչացնում է երիտասարդին, երեխային լքում ամայի ու քարքարոտ մի վայրում, ինքն էլ նետվում է լիճը՝ փոխակերպվելով ձկան[44]: Լքված երեխային խնամում է արքայական հովիվը, և աղջիկը հետագայում հայտնվում է պալատում, ինչպես և ընկեցիկ Սաթանան Բորայի դերեղմանոցից տարվում է նարթերի շեն: Երկու առասպելներում էլ կա անօրեն ամուսնություն, իսկ աղջկա ծնունդը կապված է մոր մահվան (=ջրի մեջ նետվելու) հետ՝ որպես պատճառ կամ հետևանք:

Շամիրամի և նրա մոր (Դերկետո, Դարկեյա) առասպելն իրավամբ համեմատվել է քրիստոնեական Հայաստանում լայնորեն տարածված՝ երեցկնոջ ավանդության հետ[45]: Վերջինս համբույր է տալիս անծանոթ մուրացկանին (–անօրեն ամուսնություն) և ամոթից նետվում վառվող թոնիրը, որի կրակը վերածվում է մեղրահամ ջրի, իսկ կինը՝ ձկան, դառնալով պաշտամունքի առարկա[46]: Վանի ավանդազրույցում թե՛ կինը, թե՛ նրա ամուսինը հանդես են գալիս ձկնակերպ, ինչպես միջագետքյան ձկնակերպ դիցուհին և նրա ձկնակերպ ամուսինը: Նմանապես, օսական դիցավեպի համաձայն, ստորջրյա թագավորությունում ձկան տեսք են ընդունում Ձերասան և Ախսարթագը[47]:

---

41 В. К. Афанасьева, И. М. Дьяконов. Иштар; А. Г. Лундин. Астар; И. Ш. Шифман: МНМ-I, сс.115-116, 595.

42 Ա. Ղանալանյան. Նշվ. աշխ., N 188, էջ 69–71, № 232 Բ, էջ 88:

43 Շամիրամի՝ առաջին ամուսնուց ունեցած որդիների անուններն իրանական են (Հյուսպատես և Հյուգասպես), բացի այդ՝ Շամիրամն, ըստ ավանդության, պատերազմում է Իակտրիայում՝ Զրադաշտ մոգի դեմ, որտեղ ասորեստանյան արշավանքները չեն հասել երբեք, նաև՝ Շամիրամի անունը կրող «կախովի այգիները» վերագրվում էին պարսիկ կամ մար վարձակ կնոջ (Դիոդորոս Սիկիլիացի. Պատմական գրադարան (աշխատասիրությամբ Ս. Մ. Կրկյաշարյանի). Երևան, 1985, էջ 19–22, 26, 167, ծանոթ. 50, 51):

44 Դիոդորոս Սիկիլիացի. Նշվ. աշխ., էջ 18-19: Համեմատությունը Ձերասայի առասպելի հետ առաջինը կատարել է՝ Ա. Պետրոսյան. Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման ինդիրը. Երևան 1997, էջ 115:

45 Ն. Ադոնց. Մի հին պաշտամունքի հետքերը Հայաստանում.– Հայաստանի պատմություն. Երևան, 1972, էջ 378: Առաջինը երեցկնոջ և Դերկետոյի առասպելները համադրել է Գ. Խալաթյանցը. տե՛ս Մ. Աբեղյան. հ. Ը, Երևան, 1985, էջ 252: Հմմտ. նաև Ս. Հարությունյան. Հայ առասպելաբանություն. Բեյրութ, 2001, էջ 371–373. Հայոց ծիսերգային «Դերիկո, հոյ նար» կրկնակում, ըստ երևույթին, պահպանվել են Դերկետոյի անվան արձագանքները:

46 Ա. Ղանալանյան. Նշվ. աշխ., № 263, էջ 98, № 233 Ա, էջ 88-89, № 252, էջ 95, № 89, էջ 106: Ավանդությունը տարածված էր Գորիսում, Տարոնում, Շիրակում, Վանում, նաև Կարինում (Ն. Ադոնց. Նշվ. աշխ., էջ 379): Հմմտ. նաև Աշոցքում նման մի պատկերացում՝ Ս. Հարությունյան. Նշվ. աշխ., էջ 373:

47 Сказания о нартах (осетинский эпос), М., 1978, с. 53.

Հայկական առասպելում վառվող թոնիրը (=ջրհորը), փաստորեն, ծիրանի ծովի կամ սուրբ լճի ծիսական մանրակերտն է[48]: Մեղրահամ ջրով լցված այդ սուրբ ավազանը դառնում է Մեղրագետի ակունքը, որի մոտ են հայկական ջրածին երկվորյակները կառուցում իրենց բերդը[49]: XIX դ. Մեղրագետի ակունքի շուրջը քարերով սալարկված էր, և կողքին մի գմբեթարդ սրբավայր էր կառուցված. այդտեղից ոչ հեռու գտնվում էին Շամիրամ և Ջրհոր գյուղերը՝ իրենց անունների մեջ պահելով Շամիրամի ձկնակերպ մոր՝ ջրհորի մեջ նետվելու առասպելի հիշողությունները: Ջրհոր գյուղը գտնվում էր հենց Գրգուռ լեռան ստորոտում, որի գագաթային մասում գտնվող ծծմբաերկաթային յոթ փոքրիկ լճակները նույնպես համարվում էին Մեղրագետի ակունքներ[50]:

Այսպիսով, Մեղրագետն, ըստ հայերի, առասպելաբանական ծագում ունի: Այն նաև ոչ պակաս պաշտամունքային նշանակություն ունեցող Արածանի գետի վտակն է: Արածանիում, ըստ մի գեղեցիկ առասպելի[51], սիրում էր լոգանք ընդունել սիրո պիցուհի Աստղիկը՝ Շամիրամի բնիկ հայկական զուգահեռը: Աստղիկը լողանում (կամ լվացվում) էր գիշերով՝ Գրգուռ լեռից ոչ հեռու գտնվող Գուռգուռա վայրում՝ տասմետրանոց Գուռգուռ ջրվեժից ներքև[52]: Աստղիկի մերկ գեղեցկությամբ հիանալու եկած կտրիճները Դաղոնաց լեռան վրա կրակներ էին վառում, բայց Աստղիկն իրեն անտեսանելի էր դարձնում՝ շրջակայքը պատելով թանձր մշուշով: Ըստ երևույթին, Գուռգուռայում՝ մշուշի քողի տակ, տեղի էր ունենում Աստղիկի և ամպրոպային աստծո՝ Վահագնի մերձեցումը, ինչի մասին ակնարկում են ամպրոպային բնաձայնական տեղանունները[53]:

Հայկական քրիստոնեական ղրույցներում Վահագնին և Աստղիկին փոխարինում են սանահայրն ու սանամայրը, իսկ նրանց հակառակորդ երկնային աստվածը քավորն է (հմմտ. «Հարդաղողի» առասպելները): Մի ղրույցի համաձայն՝ քավորը կանգնած է գետի մի ափին, իսկ սանահայրը հանդիպակաց ափին տիկ է կարկատում, որի վրա նստած՝ լողալով անցնում են գետը (քալքի տիկ): Քավորի և սանահոր միջև տեղի է ունենում

---

48 Հմմտ. օսական վեպի՝ Ծովի մեջ նետվող ջրային աղջկան ուղղված խոսքերը. «վե՛րջ քո օջախին»:

49 «Սասնա ծռերի» որոշ պատումների համաձայն՝ Սասուն բերդը կառուցվում է Մեղրագետը ճեղքող վտակի ակունքում: Հետաքրքիր է, որ հնդկական երկվորյակները սերտորեն առնչվում են մեղրի պաշտամունքի հետ:

50 Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. հ. I, Երևան, 1986, էջ 961: Այլ պատկերացմամբ՝ Մեղրագետի ջուրը գալիս է Նեմրութ լեռան գագաթին գտնվող «թոնիրից», որը լեռան խառնարանի յոթ լճակներից ամենամեծն է (Գ. Սրվանձտյան. Երկեր. հ. I, Երևան, 1978, էջ 49–50): Հմմտ. նաև Վանի սուրբ ջրհորի «Ցոթ թոնիր» անվանումը (Ն. Ադոնց. նշվ. աշխ., էջ 378, Ա. Ղանալյան. նշվ. աշխ., էջ 106, 439):

51 Գ. Սրվանձտյան. նշվ. աշխ., էջ 71–72:

52 Հայերն ամպրոպի որոտին ասում էին գոգռալ, ամպրոպի աստծուն՝ Գոգռ-բաբա, հմմտ. նաև օսերեն гуыр-гуыр (gwər-gwər), թալիշերեն gur'gur «ամպրոպի որոտ» բառերը, որոնք բոլորն էլ բնաձայնություններ են և նույնական են Գրգուռ, Գուռգուռա տեղանուններին:

53 Նմանատիպ մի հավատալիք՝ ամպրոպային աստծո և սիրո գիցուհու մերձեցման մասին, կար Փոքր Ասիայի Գարգարոն լեռան վերաբերյալ (Ա. Պետրոսյան. նշվ. աշխ., էջ 76):

հետևյալ երկխոսությունը. «Քսվոր. Բարի լուս, սա՛նահեր: / Սանահեր. Յե՛, տիկ կը կարիմ: / Քսվոր. Սանամոր քեֆն ի՞մալ է: / Սանահեր. Սա՛ղ մնաս, ջու՛ր կէրթա ուրնե»[54]: Տիկ կարկաուելն, այստեղ, թերևս, սանահոր և քավորի միջև ամպրոպային հակամարտության առասպելի մնացուկ է (հմմտ. վայնախական ամպրոպային առասպելի տիկերը): Ինչ վերաբերում է սանամոր ջուր բերելուն, ապա գետային սիրավեպի կովկասյան տարբերակներում Սաթանայի և հովվի մերձեցումը երբեմն տեղի է ունենում այն ժամանակ, երբ դիցուհին գնում է աղբյուրից ջուր լցնելու:

Վերջիններում գրեթե միշտ առկա է դիցուհուն և ամպրոպային հերոսին բաժանող սահմանը՝ գետը կամ ծովը: Ուշագրավ է, որ վայնախական Սաթայի հետ կապված Սանթիրոժոլգ աստղերը Քնար, Կարապ և Արծիվ համաստեղությունների ամենապայծառ աստղերն են, ընդ որում Կարապն ու Արծիվը գտնվում են Ծիր Կաթինի երկու հակադիր կողմերում: Արծիվը Սաթենիկի ամպրոպային ամուսնու խորհրդանիշներից էր, իսկ կարապը հնուց համարվում էր սիրո և դեղեցկության դիցուհու սարիբուտը: Այս երկնային պատկերացման մեջ, ըստ ամենայնի, Ծիր Կաթինը համադրվում էր գետի հետ, որի երկու հանդիպակաց ափերին կանգնած են Սաթանան և նրա ամպրոպային սիրեկանը: Հետաքրքիր է, որ ջավախահայերի հավատալիքներով՝ Հարդագողի ճանապարհը ջրային ծագում ունի, այն կոչվում է երկնային պատաուք կամ կար, որտեղից, իբր, ժամանակին գահավիժել է համաշխարհային ջրհեղեղը[55]:

Գետը կամ ծովը դիցաբանական ընկալումներում համարվում էին այս և այն աշխարհների, երկնքի և երկրի սահման, որի միջոցով կատարվում էր այդ երկու՝ արական և իգական սկզբունքների միացումը, սուրբ ամուսնությունը: Ամպրոպային և ջրային աստվածությունների սուրբ ամուսնությունը նշանավորվում էր ամպրոպով և պտղաբեր անձրևով: Սակայն վերոնշյալ հայկական ուշ պատկերացման մեջ Վահագնի անունը չի հիշատակվում, այլ խոսվում է միայն ինչ-որ կտրիճների մասին: Գետային լոգանքի գրեթե բոլոր կովկասյան առասպելներում ջրային դիցուհին մերձենում է ոչ թե իր ամուսնու կամ սիրեկանի, այլ ուրիշ կտրիճի՝ հավանաբար, նրա հակառակորդի հետ, որի հանդեպ դիցուհին թաքուն սեր էր տածում: Գետում՝ ամպրոպային դյուցազնից հղիացող մայր աստվածուհու ամենացայտուն օրինակը Արիան գետում լողացող Սաթանեյ-Գուաչայի մասին աբխազական առասպելն է[56]:

Աբխազական մի պատումի համաձայն՝[57] Սաթանեյ-Գուաչան, իր հարյուր որդիների համար զգեստներ կարելուց հոգնած, լրիվ մերկանում և մտնում է գետը, երբ մյուս ափին տեսնում է նարթերի՝ իր որդիների նա-

---

54 Սահակ Մովսիսյան (Բենսե). Հարք.– Հայ ազգագրություն և բանահյուսություն. Երևան, 1972, էջ 158: Եվս մեկ զրույցի համաձայն քավորը մերկ վիճակում տեսնում է սանամորը, որն ամոթից փախչում, մանում է թոնիրը: Այս զրույցը համադրելի է ամոթից սուրբ լճի մեջ նետված Դերկետոյի առասպելի հետ:

55 Ե. Լալայան. Երկեր. հ. I, Երևան, 1983, էջ 239:

56 Ш. Д. Инал-Ипа. Նշվ. աշխ., էջ 15. ենթադրվում է, որ Արիան (Արիոն, Իրիոն) անունով կոչվել է Ռիոն գետը: Այլ տարբերակներով Սաթանեյի հանդիպումը գետային սիրեկանի հետ տեղի է ունենում Կուրանում (Կուրինա) կամ Կոդորում, նա լողում է նաև Ռիցա լճում, Սև ծովում:

57 Абхазские сказания (сост. Шикунба Б. В.), Сухуми, 1961, с. 41-43.

խիրը և նախրապան Զարթըժվին, սրի հանդեպ տածած կրքից ինքն այրվում էր արդեն մի քանի դիշեր: Սաթանեյը Զարթըժվին կանչում է իր մոտ, վերջինս արթնանալով՝ տեսնում է մեջքի վրա լողացող Գուաչային[58]*: Սիրավառ հովիվը երեք անդամ փորձում է անցնել դեար, բայց ամեն անդամ ալիքները նրան դուրս են շպրտում: Արգելքի և դժվարությունների հաղթահարման այս մոտիվը կարևոր տեղ է զբաղեցնում ջրային մերձեցման առասպելում: Հայկական տարբերակներում գլխավոր խոչընդոտը դիշերային խավարն է, այնուհետև՝ մառախուղը, որը չեզոքացնում է կրակների լույսը, ի վերջո՝ նաև ալեկոծությունը*[59]*: Արտաշեսի վեպում խոչընդոտը ալանների արքայի ուղած գլխադիին է Սաթենիկի դիմաց:*

Աբխազական մի տարբերակի համաձայն՝ Սաթանեյը կախարդ էր՝ նա հեղեղում է դետը և խոչընդոտում հովվի անցումը, սակայն կատարում է նրա խնդրանքը՝ մերկ վիճակում հենվում է առափնյա քարաժայռին[60]*: Եվ կամ՝ ճարտհատյալ հովիվը խնդրում է Սաթանեյին, որ նա հանի իր գլխաշորն ու ցույց տա պարանոցը: Սաթանեյը դեմքով շուռ է գալիս Զարթըժվի կողմը, իսկ վերջինս, գոչելով «գնում է այն, գնում» և լարելով ուժերը, գոռում է ու մի «նետ» արձակում. կայծակի նման փայլատակում էր այն, ցնցում երկիրն ու երկինքը, ամպրոպի նման որոտում և մեգի պես պարուրում շրջակայքը: Ուշագրավ է, որ հովվի գոռալը նույնպես բացատրվում է որպես ամպրոպի որոտ*[61]*:*

Սաթանեյը, վախից դողալով, թաքնվում է քարաժայռի ետևում, նետը խրվում է քարի մեջ, որի վրա, մառախուղի ցրվելուց հետո, մարդկային պատկերը է գծագրվում: Երեք օրում դարբին Այնարը (Էնար, Ինար) քարից կերտում է ապագա երեխային: Այլ տարբերակում՝ նարթերի դարբինը խորհուրդ է տալիս Սաթանեյին քարը պահել իր մարմնի (փորի) վրա. որոշ ժամանակ անց դրանից ծնվում է Սասրըկզվան*: Այլ դեպքերում՝ Սաթանեյի գետային սիրեկանը կոչվում է Նարջխոու, Սելքկու, Նուզ, Աթլադուցա, Նաշ-Բաթակզվա, Սարթադյալա, Էրչխեու և այլն*[62]*:*

Օսական առասպելներում «Սաթանայի քարից» ծնվող դրական հերոսը՝ Սոսլանը, ուներ նաև իր բացասական հակոտնյան (Սրդոն), ինչպես հայոց դիցաբանության մեջ Սաթենիկի անդրանիկ որդի Արտավազդը երկատված կերպար էր՝ կային դյուցազնական և դիվական Արտավազդներ («վիշապաբունք գողացան զմանուկն Արտավազդ, և դև փոխանակ եգին»)[63]*: Նմա-*

---

58 *Գուաչա – ադըղ. «իշխանուհի, սկեսուր, կին, տիրուհի, պառավ»:*

59 *Աստղիկի և Արթամարի (Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Նշվ. աշխ., N 223 Ա-Բ, էջ 83–84) առասպելներո. վերջինում գլխավոր խոչընդոտը ալեկոծությունն է (Ա տարբերակ) կամ կրակի մարումը (Բ տարբերակ):*

60 Ш. Х. С а л а к а я. Приключения..., с. 170. *Դետը հեղեղելու մոտիվը նման է մի տարբերակում Սաթանեյ-Գուաչայի միզելուց գետի առաջացմանը, որը քշում-տանում է հերոսին (*Ш. Д. И н а л - И п а. *Նշվ. աշխ.*, с. 21).

61 В. Г. А р д з и н б а. Нартский сюжет о рождении героя из камня.— "Древняя Анатолия" (сборник статей), М., 1985, с. 139. *Հետաքրքիր է, որ հայ. գոռալ «բղավել» բառը բոլոր բարբառներում նշանակել է, առաջին հերթին, «ամպրոպի որոտալը» (Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ). հ. I, Երևան, 1971, էջ 581):*

62 Абхазские сказания, 1961, с. 44-46; Ш. Д. И н а л - И п а. *Նշվ. աշխ., էջ 14–15:*

63 *Խ ո ր ե ն ա ց ի, II ԿԱ, էջ 232: Մ. Ա բ ե ղ յ ա ն. Երկեր. հ. Ա, էջ 146–148:*

նապես, օսերն ունեին երկու Սաթանա՝ նարթերի և քաջքերի: Ընդ որում, քաջքերին թե՛ օսերը, թե՛ հայերը համարում էին մարդկանց հայելային արտացոլումը՝ նրանց ոտքի թաթերը թարս էին (sæ fæst'æmæ qaxǰntæm)[64]: Որոշ պատկերացումներով՝ քաջքերը հենց բնակվում են քարանձավներում՝ որպես արձագանք, կամ ջրի մակերևույթին՝ որպես մարդկանց արտացոլում: Այս առումով հատկանշական է, որ Սաթանան հանվում և գետն է մտնում՝ հրապուրվելով ջրի հսկայությամբ: Հետաքրքիր է, որ օսական Սրբդոնը ծնվում է Սաթանայից և ջրի պահապանից, որից Սաթանան ջուր էր խնդրում՝ նորսուծին Սոսլանին լողացնելու համար, մյուս դեպքերում Սրբդոնի հայրը գետերի աստված Գաթագն է (Gætæg)[65]:

Ըստ մեկ այլ օսական զրույցի՝ Սաթանան, առանց տաբատ, գետում լվացք էր անում, երբ մյուս ափից չարքը տեսնում է նրա ձյունաճերմակ մարմինը, և կրքով տարված՝ հենվում քարին, ինչից այն բեղմնավորվում է: Երբ ժամանակը գալիս է, Սաթանան բանվորներ է բերում՝ հրամայելով քանդել քարը: Վերջում նա բանվորներին օղի (araq) է խմեցնում, որի գյուտը հենց ինքն էր արել: Սրանք հարբում, քնում են, իսկ Սաթանան ածելիով զգուշությամբ պատռում է քարի վրա մնացած թաղանթը և դուրս բերում նորածին Սրբդոնին: Այս տարբերակի հետ գրեթե նույնանում է բալկարական սլատումը, որտեղ Սոջուկ (Соджукъ) անունով հովիվն ու հիասքանչ դշխուհի, գուշակ Սաթանոյը հանդիպում են Էդիլյա (–Վոլգա) գետի հակադիր ափերից[66]:

Ադըղական մի տարբերակում Օզըրմեջի կին Սաթանեյը չբեր է լինում, և Արըղ գետում լվացք անելիս՝ մյուս ափին տեսնում է նարթերի ծերունի հովիվ Սոսին, որը, չկարողանալով զսպել իրեն, սերմ է բաց թողնում. այն, ծուխ արձակելով, ջրի տակով դնում է դեպի Սաթանեյը, և բեղմնավորած քարից ծնված տղայի անունը դնում են Սոսրուկղո «Սոսի որդի»[67]: Ըստ կաբարգական դիցավեպի համահավաք պատումի՝ Հովիվ Փսըժան գետի մյուս ափից գիմում է Սաթանեյին. «Ո՜վ Սաթանեյ, որ հավասարը չունես մյուս գեղեցկուհիների մեջ, քո կանացի խելքը գերազանցում է տղամարդու իմաստնությանը, ինչու՞ ես թողնում քարը, տա՛ր այն տուն»[68]: Սաթանեյի սույն բնութագրումը համահունչ է հայոց Սաթենիկի և Արտաշեսի գետափնյա զրույցի արդյունքում Արտաշեսի ստացած տպավորությանը «իմաստուն» դշխուհու խոսքերից:

---

64 В. И. А б а е в. ОЭ, с. 49; Л. А. А б р а м я н. Об идее двойничества по некоторым этнографическим и фольклорным данным.— *«Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ)*, 1977, N 2, էջ 182-183:

65 Е. М. М е л е т и н с к и й. Место нартских сказаний и история эпоса.— "Нартский эпос" (материалы совещания 19-20 октября 1956 г.), Орджоникидзе, 1957, с. 58. Сказания о нартах, 1978, с. 261. *Հաճախ չեշտվում է, որ Սրբդոնը չէր սիրում Սոսլանին.*— ПНТО, I, с. 76.

66 С. У р у с б и е в. Сказания о нартских богатырях у татар-горцев Пятигорского округа Терской области.— СМОМПК-I, Тифлис, 1881, отд. 2, с. 37.

67 Нарты: адыгский героический эпос, М., 1974, с. 194, 189, 348. *Ադըղհրեն Սաթանեյ է կոչվում գորտնուկ, հրանունկ* (лютик) *ծաղիկը, իսկ աբազական տարբերակներում Սաթանեան երբեմն կոչվում է Սանա՝ ինչ-որ ծաղկի անունով:*

68 Нарты (кабардинский эпос), М., 1957, с. 45-47.

Աբազական առանձին պատումներ նման են կաբարդական և արխազական տարբերակներին, սակայն առկա է նաև անչափ արխաիկ մի տարբերակ. Սաթանեան լվացվում էր Ուալրի գետում, երբ մյուս ափից նրան է դիմում Արջխոուն. «Սաթանեա, չեմ կարողանում պահել այն, գալիս է այն քո կողմ»: Եվ ընկնում է «այն» Սաթանեայի վրա, ինչից նա հղիանում ու ծնում է Սոսրուկղոյին[69]: *Այս պատումը պարզորոշ արտացոլում է գետում նրա հակառակ ափերից, ջրային դիցուհու և ամպրոպի աստծո մերձեցման հնագույն առասպելությունը, որում բեղմնավորվում է ոչ թե քարը, այլ դիցուհին:*

Վայնախական տարբերակներում բացակայում է գետային լոգանքի մոտիվը, որն առկա է օսական ու մյուս հյուսիսկովկասյան տարբերակներում. մի մարդ, սեր տածելով կով կթող աղջկա հանդեպ, բեղմնավորում է կապույտ քարը, որտեղից Սելի Սաթան հանում է Սեսկա Սոլսային[70]: *Այդպիսով, Սաթան ենթադրվում է որպես Սոլսայի «մայր»*[71]: *Վայնախական այս առասպելը նույնական է Հայաստանում և Կովկասում հնուց տարածված այն պատկերացումներին, որոնք պատմում են քարի բեղմնավորման և նրանից ծնվող հերոսի մասին*[72]:

Քարի բեղմնավորման առասպելությի միահյուսումը գետային մերձեցման առասպելությին միանգամայն բնական է. քարը դիցաբանական ընկալումներում համարվում էր ստորին աշխարհի՝ երկրի խորհրդանիշ և իգականություն էր ցույց տալիս: Գետի միջոցով վերին և ստորին աշխարհների միացման առասպելում, փաստորեն, քարը փոխարինում է ստորին՝ իգական աշխարհին և հանդես գալիս որպես ամպրոպի աստվածության զուգընկեր, ամուսին: Քարի բեղմնավորումը տեղի է ունենում գետում կամ գետափին՝ ամպրոպի աստծո «նետի» միջոցով:

Նարթյան վեպի այն պատումներում, որտեղ բացակայում է նետով քարի բեղմնավորման մոտիվը, առկա է դարբնի մուրճի օգնությամբ քարից երեխային հանելու պատմությունը, որտեղ, կարծես, բեղմնավորման գործողությունը կատարում է մուրճը: Արխազական մի տարբերակում ընդհանրապես բացակայում է գետային լոգանքը: Սասրրկվան, ասես, Սաթանեյի և Այնար դարբնի որդին է, որը ծնվում է գիշերային երկար երկունքից հետո՝ ամպրոպի և կարկտի ուղեկցությամբ, այգաբացի արևի շողերի հետ միասին[73]: *Հատկանշական է, որ կաբարդական պատումի մեջ՝*

---

69 Нартыргіа (Нарты: абазинский народный эпос). Черкесск, 1975, с. 186—189, 258—260.

70 У. Б. Д а л г а т. Героический эпос чеченцев и ингушей. М., 1972, с. 287.

71 А. О. М а л ь с а г о в. *Նշվ. աշխ., էջ 50, 67. Մեկ այլ ավանդազրույցում պատմվում է չեչենական տոհմերից մեկի ծագման մասին. պատանին քնում է երկփեղկված քարի վրա, կողքով անցնում է նրա սիրած աղջիկը, և տղան երազախաբ է լինում: Երբ նա արթնանում է և վերկանում, քարը փակվում է, մի ուռուցք է առաջանում քարի վրա, որը գնալով մեծանում է, և ինն ամիս անց այդտեղից երեխա է ծնվում, նա էլ դառնում է տոհմի նախահայրը (նույն տեղում, էջ 49):*

72 Н. Т р у б е ц к о й. Кавказские параллели к фригийскому мифу о рождении из камня (земли).— "Этнографическое обозрение", М., 1908, с. 90; В. Г. А р д з и н б а. *Նշվ. աշխ., էջ 133. Ամենահայտնին կեղծ-Պլուտարքոսի հաղորդած առասպելն է. Միհրը բեղմնավորում է ժայռը, որից ծնված աստվածամարտիկ Դիորփոսը Արաքս գետի մոտ վերածվում է լեռան:*

73 Ш. Х. С а л а к а я. Приключения..., с. 25.

դարբնի մուրճի «ամեն մի հարվածը կարծես Սաթանեյի սրտին դիպչի»: Այս առումով հետաքրքրական է հմմեմատությունը հայոց միջնադարյան սիրերգության համտնման պատկերացման հետ. հայրեններում աղջիկը նույնացվում է քարի, իսկ տղան՝ մուրճի կամ աղեղնաձիգի հետ, որն իր նետը արձակում է դեպի սիրեցյալը, որպեսզի հասնի նրա սիրուն[74]:

Քարի պտղաբերիչ ուժն ու իգականությունը երևում է բազմաթիվ հավատալիքներում և ավանդություններում: Տարբեր ժողովուրդների՝ անձրև առաջացնելու ծեսերը կապված էին քարը թրջելու կամ դետի, աղբյուրի ջրում այն թաթախելու հետ[75]: Սա կարծես գետային լոգանքի առասպելույթի առավել վաղնջական տարբերակը լինի: Այսպես, Արցախի Գիզատ ուխտատեղում մի ծակ ժայռ կա, որի վրա «երաշտ ժամանակ կանայք գնում մոմեր են վառում և ծակից ջուր վայր ածում»: Նմանատիպ քարեր, բայց առանց ծակերի, կային նաև Թաղավարդ և Դռնավարդ գյուղերում, ընդ որում վերջինիս քարը նպաստում էր և անձրևի դադարեցմանը՝ այդ նպատակով քարի վրա կրակ էին վառում: Երաշտի ժամանակ Գանձակում Արթենա սարից թաշկինակների մեջ փաթաթած քար էին իջեցնում, հաջորդ օրը խաչով-խաչվառով, քահանաների և ահագին թափորի ուղեկցությամբ քարը տանում, հանդիսավոր նետում էին որևէ ջրի մեջ, որպեսզի անձրև տեղար, այնուհետև երբ անձրևը բավականաչափ գալիս էր, քարը հանում էին[76]:

Դիգորական Զինադա, Դունթա և այլ գյուղերում կայծակնահար կամ ջրասույզ եղածի գերեզմանից քար էին վերցնում ու դնում ջրի մեջ, անձրևի սկսվելուց որոշ ժամանակ անց քարը վերադարձնում էին նախկին տեղը, որպեսզի անձրևը դադարի: Օսերը երաշտի ժամանակ նաև Սանիբյան ձորում գտնվող Ֆարնբգ ադագ քարանձավի սնգուկից հանում էին ինչ-որ սրբի ոսկորներ, և կանայք դրանք տանում-դնում էին գետի ջրի մեջ՝ անձրև առաջացնելու նպատակով: Որոշ տեղերում օսերի կանայք, անձրև առաջացնելու համար, իրար ջրում էին: Մեգրելները երաշտի ժամանակ քարի փոխարեն որևէ որբի արձան էին ընկղմում ջրի մեջ: Զավախքի հայերը արձանի փոխարեն ջուրն էին գցում կենդանի մարդու՝ և ոչ թե պատահական մեկին, այլ երեցկնոջը[77], որն, ըստ էության, փոխարինում էր Արցախի ու Գանձակի ավանդույթի քարին:

Հյուսիսային Կովկասի Փսրժ գետի վերին հոսանքի շրջանում մի քար կար, որը կոչվում էր «Սաթանեյի վառարան»: Զեքքեզները հավատում էին, որ «Սաթանեյի վառարանի» միջի՝ իբր պտտվող քարը հնարավոր չէ հանել, հետագայում «վառարանի» տեղում սկսեցին քարածուխ արդյունահա-

---

74 Ա. Այդինյան. «Թուխ մանուկի» պաշտամունքի որոշ արտացոլումներ հայրեններում.— Թուխ մանուկ (Նստաշրջանի նյութեր). Երևան, 2001, էջ 47: «Ամուր եմ քարիտ նըման, / Որ մրճիկն ի յիս չի բանի. / Բարձր եմ թուխ ամպիտ նըման, / Որ ոչ ով ի յիս չի հասնի. / Աղեղն եղնենի լինի / Ու լարն ի վերայ գալէնի. / Քաչօղն քաջորդի լինի, / Հալա թէ իմ սիրուն հասանի»:

75 Զ. Ֆրեզեր. Ոսկե ճյուղը (մոգության և կրոնի ուսումնասիրություն). Երևան, 1989, էջ 93-95:

76 Ե. Լալայան. Երկեր. հ. II, Երևան, 1988, էջ 156, 430-431:

77 Б. А. Калоев. Осетины (историко-этнографическое исследование). М., 1971, с. 244. Ե. Լալայան. նշվ. աշխ., հ. I, էջ 248:

նել[78]: Փաստորեն, «վառարանը» Սաթանեյն է, իսկ ներսում գտնվող քարը՝ նրա որդու սաղմը: Ճիշտ նույն պատկերացումն արտացոլված է արխաղական մի հեքիաթում, որտեղ լվացք անող աղջիկը կուլ է տալիս իր դրպանի քարը և հղիանում: Հատկանշական է, որ կարաչայական Սաթանեյը «հղի քարը» պահում է վառվող օջախի մեջ՝ նախքան նրանից իր որդու ծնվելը: Այսպիսով, նարթյան պատումներից ակնհայտ է բեղմնավորվող քարի համադրումը Սաթանային: Նմանապես, քարի հետ է համադրվում հայկական Շամիրամը: Առասպելի համաձայն՝ նա ծարավում և ջուր է խմում Վանա լճից, ապա իր կախարդական հուռութքները նետելով ծովը՝ վերածվում է քարի[79]: Ծովն ու ջրով հագեցումը, ելնելով առասպելի ու Շամիրամի կերպարի բուն իմաստաբանությունից, կարելի է մեկնաբանել զիջության, այն է՝ սեռական պահանջի հագեցման տեսանկյունից[80]:

Կովկասյան առասպելներում նույնպես Սաթանան և քարը գրեթե նույնանում են: Աբխազական Սաթանեյը, մինչև բեղմնավորված քարից երեխայի ծնվելը, այն պահում է իր մարմնի (փորի) վրա, կաբարդական Սաթանեյը նստած է այն քարին, որից հետագայում ծնվում է Սոսրուկոն: Սա հիշեցնում է հայկական քրիստոնեական զրույցը, ըստ որի՝ Արցախի Ալամենց գոմեր կոչվող գյուղի մոտ «մի մեծ քար կա, որի մասին ասում են, թե Մարիամ Աստվածածինը դրա վրա նստած է եղել, երբ հրեշտակը ավետիս է տվել նրան, թե որդի պիտի ունենա»[81]: Կարաչայական նշված տարբերակում նույնպես տեղի է ունենում սուրբ հղիացում՝ ընդ որում առանց կովկասյան տարբերակներին բնորոշ սեռական գործողության, բայց տղան ծնվում է ոչ թե քարին նստած Սաթանեյից, այլ քարից: Փաստորեն, գետափնյա քարը դառնում է Սաթանայի ատրիբուտը:

Հ. Աճառյանը, թեև կասկածով, հնարավոր է համարում Սաթենիկ անձնանվան ծագումը սաթ բառից, մանավանդ որ նույն սկզբունքով կազմված Նազենիկ, Վարսենիկ, Արփենիկ անունները հայկական են՝ անկախ դրանց արմատների ստուգաբանությունից[82]: Սաթը («հյուսիսի ոսկի») խեժական ծագում ունեցող քար է, շփելիս էլեկտրականանում է, իսկ լուցկուց՝ բոցավառվում[83]: Հայտնի են սաթի բազմաթիվ տեսակներ՝ բաց դեղինից մինչև կարմիր, կապույտ և սև, սակայն ամենահարգին ու տարածվածը ոսկե-

---

78 М. И. М и ж а е в. МНМ-II, с. 414; Нарты: адыгский героический эпос, с. 348.

79 *Խ ո ր ե ն ա ց ի, I ԺԸ, էջ 70:*

80 *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 255:*

81 *Ե. Լ ա լ ա յ ա ն. նշվ. աշխ., հ. II, էջ 156:*

82 *Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Հայոց անձնանունների բառարան. հ. Դ, Երևան, 1948, էջ 9, 342-343: Հմմտ. նաև անհայտ ծագման Սաթի անունը՝ հիշված 1591թ. ձեռագրում և ժամանակակից օսերի մեջ տարածված Սաթի անձնանունը: Աճառյանն իր ենթադրությանը խանգարող միակ հանգամանք էր գտնում Սաթենիկ-Սաթանա նույնացումը: Սակայն Սաթենիկ անվան ալանական ծագման վարկածը ոչ մի կերպ չի հիմնավորվում, հմմտ.* Г. М. Н а л б а н д я н. Армянские личные имена скифо-алано-осетинского происхождения. — "Вопросы иранской и общей филологии", Тбилиси, 1977, с. 211.

83 В. Ш у м а н. Мир камня (I-II), т. I, М. 1986, с. 60, т. II, с. 212-214. *Հմմտ. հնացած սաթույն «էլեկտրականություն» և սաթական «էլեկտրական» բառերը, որոնք կազմվել են հուն. էլեկտրոն (հայ. բրբռ. ղեկտոր) «սաթ» բառի նմանությամբ (հմմտ. Հ. Ա ճ ա ռ յ ա ն. ՀԱԲ. հ. II, Երևան, 1973, էջ 10):*

գույն կամ արևագույն սաթն է[84]: Սև սաթը կամ գաղաթը (Փոքր Ասիայում հոսող Գագաթ գետի անունով) հայերն անվանում էին գիշեր (վրաց. giseri) և վերագրում նրան մոգական հատկություններ[85]: Նարթյան որոշ պատումներում Աթանայի որդին ծնվում է սև կամ կապույտ քարից: Սաթենիկը, նվազագույնը՝ ժողովրդական ստուգաբանությամբ, կարող էր կապվել սաթ պաշտամունքային քարի հետ:

Սաթենիկ < սաթ առնչության ամենաթույլ կողմն այն է, որ հայոց վեպում, ի տարբերություն կովկասյան պատումները, բացակայում է Սաթենիկի կապը քարի հետ: Բացի այդ, սաթ բառն անհայտ ծագում ունի հայերենում[86]: Սակայն Սաթանայի «գետափնյա սիրային արկածն» այլաբանորեն վերագրվել է Սաթենիկ արքայագստերը, որը գալիս է Կուր գետի ափ՝ հայոց Արտաշես թագավորից խնդրելու ազատել իր դերված եղբորը[87]: Արտաշեսը սիրահարվում է Սաթենիկին և գետի մյուս ափից, ոսկեթող չիկափոկ պարանով (հմմտ. աբխազական տարբերակի կայծակնանման նետը) փախցնում է «աչագեղ» Սաթենիկին[88], որից ծնվում է Արաավազդը (=Սոսլան): Վերջինիս բացասական կրկնակը կամ հակոտնյան կարող էր պատկերացվել որպես Արտաշեսի հակառակորդ Արգավանի որդի: Հետաքրքիր է, որ Ժ. Դյումեզիլը չերքեզական Արգունի կողմից Սաթանայի առևանգումը համեմատում է հայոց Արտաշեսի կողմից Սաթենիկի առևանգման պատմության հետ[89]:

Ըստ առասպելի՝ Արտաշեսի և Սաթենիկի հարսանիքի ժամանակ ոսկե ու մարգարտե անձրև է տեղում[90]: Պատմահոր մեկնաբանությամբ՝ «մեր թագավորները սովորություն ունեին, իբրև փեսա դահլիճի գուռը հասնելիս, գրամներ շաղ տալ... Նույնպես և թագուհիները՝ առագաստի սենյակում՝ մարգարիտ»: Այս սովորությունն, ավելի շուտ, ոչ թե պատճառն, այլ հետևանքն է նշված վիպական երգի մեջ արտացոլված դիցարանական պատկերացման[91]: Ըստ էության, Արտաշեսն ու Սաթենիկը պատմավիպա-

---

84 Н. И. Корнилов, Ю. П. Солодова. Ювелирные камни. М. 1986, с. 238-241. Տարբեր դարաշրջանների ծագման սաթի աշխարհում ամենահայտնի սեղավայրը գտնվում է Արցախի տարածքում:

85 Արարատյան դաշտի հայերը եռանկյուն գիշերից հմայիլներ էին կրում՝ չար աչքի դեմ, գտնում էին, որ նայելով այդ քարին՝ մարդու տեսողությունը լավանում է: Սև սաթից պատրաստված հմայիլներ են գտնվել նաև Արդաբիլից, Թարաուարանից և այլ վայրերից.— Амулеты и талисманы кавказских народов: СМОМПК-46, Махачкала, 1929, с. 215; К. Паткано в. Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в 17-ом веке. СПб., 1873, с. 42.

86 Հ. Աճառյան. ՀԱԲ. հ. IV, Երևան, 1979, էջ 154. վրաց. sati և ուտ. sat բառերը փոխառյալ են հայերենից: Օսերենում սաթը կոչվում է jinji (дзиндзи).

87 Ա. Պետրոսյան. նշվ. աշխ., էջ 111: Ընդհանրապես, գետային լոգանքի կովկասյան առասպելներն առաջինը լայն տեսադաշտով քննում և հայոց Աստղիկի առասպելի հետ է համադրում՝ նույն տեղում, էջ 76, 110–116:

88 Մ. Աբեղյանն այս առասպելը համեմատում է «Շահնամեի» նույնանման մի միջադեպի հետ (Մ. Աբեղյան. Երկեր. հ. Ա, էջ 173–174):

89 В. И. Абаев. Нартовский эпос.— ИСОНИИ, т. 10, вып. 1, с. 42.

90 «Տեղ ոսկի տեղայր / ի փեսայութեանն Արտաշիսի, / Տեղայր մարգարիտ / Ի հարսնութեան Սաթինկանն (Խորենացի, II Ծ, էջ 214): Հմմտ. Զևսը ոսկե անձրևի տեսքով մերձենում է Դանայային:

91 Հարսանեկան նույն ծեսը պահպանվել է առ այսօր, միայն թե թանկարժեք ոսկին ու մարգարիտը նոր ժամանակներում փոխարինվում էին չամիչով, ընկույզով, հացահատիկով և նման բաներով (Մ. Աբեղյան. Երկեր, հ. Ը, էջ 172):

կան ավանդությունում փոխարինում են Վահագն-Ասալիկ *սրբազան զույգին, որոնց ամուսնության ժամանակ նույնպես անձրև էր տեղում: Ուշագրավ է, որ* Վահագնը *Կոմագենեի հայկական դիցարանում կոչվում էր* Արտագնես[92]:

*Օսական Սաթանայի ամուսնու՝ Վըրըզմագի (*Wərəzmœg*) կերպարը համապատասխանում է հայկական Վիպասանքի Արտաշեսին՝ Սաթենիկի ամուսնուն: Վըրըզմագը նույնպես սլանում է ջրի վրայով՝ սև արծվի վրա նստած (հմմտ. «Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն դեղեցիկ.../ Եւ անդեալ որպէս գարծուի սրսթեւ ընդ դեան»), ինչը առասպելի ընկալմամբ համազոր է անդրաշխարհ ուղևորությանը՝ Արտաշեսը Սաթենիկին փախցնում է այն աշխարհից՝ գետի մյուս ափից: Արծվին նստած Վըրըզմագի թռիչքը Սև ծովի վրայով համազոր է Արտաշեսի գետանցին, քանի որ գետային մերձեցման առասպելի օսական մի տարբերակում Սաթանան և հովիվ Տելվեսն իրար հանդիպում են ոչ թե գետի, այլ Սև ծովի երկու հանդիպակաց ափերից. Սաթանայով զմայլված հովիվը բեղմնավորում է քարը, որից ծնվում է Բաթրաձը[93]:*

Օսական Վըրըզմագին *հանկարծակի հայտնված սև արծիվը հասցնում է Սև ծովի մեջտեղը և գնում մի քարի վրա, այնտեղ Վըրըզմագը հանդիպում է իր որդուն, որի գոյության մասին ինքը չգիտեր, քանի որ* Սաթանան *նրան ծննդաբերել էր ծնողների՝ գոնբետրրների (–ծովային էակների) տանը և թողել այնտեղ: Նարթյան դիցավեպի համաձայն՝ Սաթանայի և Վըրըզմագի անանուն որդին (համապատասխանում է հայոց դիցաբանության* Արևամանուկին*) ապրում է մեռյալների աշխարհում: Պատմվում է, թե ինչպես նա հանդերձյալ աշխարհում կարոտում է իր ծնողներին և համոզում ստորերկրայքի տիրակալ Բարաստրրին՝ որոշ ժամանակով բաց թողնել իրեն: Գալով երկիր՝ տղան արշավանքի (*balc*) է հրավիրում Վըրըզմագին, որը չի ճանաչում որդուն. վերջինս քշում է Թերք-Թուրք երկրի նախիրները և ավարը տալիս հորը: Այդտեղ միայն Վըրըզմագը ճանաչում է որդուն և շտապում Սաթանային հայտնելու նորությունը: Սակայն տղան մինչև մայրամուտ պետք է վերադառնա մեռյալների թագավորությունն, այդ պատճառով չի կարող շրջվել մոր կողմը, որը վազում է նրան տեսնելու: Սաթանան աստծուց խնդրում է լեռան լանջին արևի թույլ ճառագայթներ ուղարկել, և այն պահին, երբ տղան մտնում էր անդրաշխարհի դարպասներից ներս, արևի թույլ շողերը (որն օսերը կոչում են* mærdtə xūr *«մեռյալների արև», իսկ հայերը՝ «մեռլի արև»[94]), ընկնում են սարին,*

---

92 Գ. Խ. Ս ա ր գ ս յ ա ն. *Հելլենիստական գարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին. Երևան, 1966, էջ 30: Արտագնես, Արտաշես անունները ծագում են հ.-ե.* *art- *«սրբազան օրենք, կարգուկանոն» արմատից, որն, ամենայն հավանականությամբ, ըստ Գ. Ս. Ասատրյանի անձնական հաղորդման, առկա է նաև վայնախական* Արթիգ *(*Аьртиг*) գիցանվան մեջ. անձրև առաջացնելու ինգուշական մի ծիսերգում (աղջիկների կատարմամբ) ասվում է. «Անջրև թող գա, աստված,/ արտերը թող բերքառատ լինեն, Սելա,/ Արթիգ, հատիկ, երկու. հատիկ...» (*А. О. М а л ь с а г о в. *Նշվ. աշխ., էջ 46):*

93 В. П ф а ф. Путешествие по ущельям Северной Осетии: Сборник сведений о Кавказе, вып. 1, Тифлис, 1871, с. 172.

94 G. S. A s a t r i a n, T. D a l a l i a n. “The Mothers of Night” (An Armenian – East-Iranian Parallel): Iran and the Caucasus, vol. 3–4, 1999–2000, p. 171.

պատանին շրջվում է մոր կողմը, որն իր մատանին նետում է տղայի մատին: Սաթանան վերադառնում է տուն և հոգեհաց տալիս: Այդ ժամանակներից սկսած օսերը հոգեհաց են կազմակերպում հանդուցյալների պատվին[95]*: Սաթանան, այդպիսով, հայկական ավանդազրույցների կնոջ նման, մի պահ կանգնեցնում է վերջալույսի արևի ընթացքը: Հայկական ուշ զրույցներում Արևամանուկին փնտրելու ուղևորված հոր և մոր անունները մոռացված են: Որոշ տարբերակներում արևի ընթացքի դադարեցումը կապված է կարի գործն ավարտելու հետ*[96]*: Նմանատիպ զրույց կա ադըգական դիցաբանության մեջ՝ Սաթանեյն իր կարի գործը հասցնելու համար արևին խնդրում է փոքր-ինչ սպասել, այդ օրվանից սրևը մայրամուտի ժամանակ մի պահ կանգ է առնում երկնակամարում*[97]*: Աբխազական նման մի հեքիաթում արևի ընթացքը դադարեցնող աղջիկը, որն իր փեսացուի համար շոր էր կարում, պատժվում է, ինչպես հայկական Արևամանուկը*[98]*:*

Ըստ երևույթին, Սաթանայի առասպելների մեջ արևային պատանյակի (=Արևամանուկ) կերպարը Սոսլանի առավել ուշ արտացոլումն է, թեպետ նրա հատկանիշների մեջ առկա է այնպիսի մի վաղ պատկերացում, ինչպիսին ծովի ջրից ծնվող արևի առասպելույթն է: Սոսլանին (Սոսրուկո) նույնպես երբեմն բնորոշում են որպես արևային աստվածություն[99]*, սակայն նրա կերպարի մեջ առավել էական են ժայռին դամված կամ ժայռում փակված կովկասյան հերոսի հատկանիշները: Առասպելի համաձայն՝ քաջքերի* (kajətæ) *Սաթանան իր որդու համար կազմակերպում է* kæxc՝ *տոն, որը նվիրված էր տարվա ընթացքում ծնված երեխաներին: Նա քաջքերի գեղեցկուհիներին ուղարկում է նարթերի Սաթանայի մոտ՝ նորածնի համար նվերներ պահանջելու: Ճանապարհին՝ գեղեցկուհիներին հանդիպած Սոզրըկոն անարգում է նրանց, ինչի համար, քաջքերն Սաթանայի հրամանով, չարքերը, որս անելիս, բռնում են Սոզրըկոյին և մեխում պատին: Երկար որոնումներից հետո նարթերն Արևի Դստերից (Acəruxs)՝ Սոզրըկոյի կնոջից, իմանում են բանտարկված նարթի տեղը և ազատում նրան: Բաթրաձը կոտորում է քաջքերի քաղաքի բնակիչներին և դերուհիներով ու մեծ ավարով վերադառնում տուն*[100]*: Այս առասպելը համադրելի է քաջքերի կողմից Մասիսի քարանձավում շղթայված հայկական Արտավազդի ավանդազրույցի հետ, որը նույնպես կալանվում է որս անելիս, և որին, սակայն, ոչ ոք չի կարողանում ազատել: Օսերը պահել են նաև Արտավազդի մասին պատկերացումը՝* Art՝awaz, *որն, իբր, աստծո կողմից դամված է լուսնին և առաջացնում է լուսնի խավարումները, դարբիններն ամեն անգամ*

---

95 Д. Ч о н к а д з е, В. Ц о р а е в. Осетинские тексты (под ред. акад. А. Шифнера).— "Записки императорской академии наук", т. 14, кн. 1, СПб., 1868, с. 71—92; Д ж. Ш а н а е в. Народные сказания кавказских горцев: Сборник сведений о кавказских горцах, вып. V, Тифлис, 1871, отд. 2, с. 22—27; ПНТО, вып. 1, с. 21—27.

96 *Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Նշվ. աշխ., էջ 44–49:*

97 Нарты: адыгский героический эпос, с. 349.

98 Абхазские народные сказки, М., 1975, с. 393—395.

99 Ж. Д ю м е з и л ь. Скифы и нарты. М., 1990, с. 71—76.

100 В. И. А б а е в. ОЭ, с. 48—52.

մուրճով հարվածում են կռանին, որպեսզի Արտաուազի շղթաները ամրանան[101]:

Այսպիսով, հայկական Վիպասանքի «Արտաշես և Սաթենիկ» շարքից օսական ավանդույթում գանում ենք թե՛ «Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն դեղեցիկ...», *թե՛* «վիշապաղունք դողացան դմանուկն Արտավազդ, Եւ դէ փոխանակ եղին», *և թե՛* «եթէ դու յորս հեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս, Զքեզ կալցին քաջք, Տարցին յԱդատն ի վեր ի Մասիս. Անդ կայցես, և ղլոյս մի՛ տեսցես» *մոտիվները կամ դրանցում արտացոլված պատկերացումները: Սրանց դումարած, Ժ. Դյումեզիլը* «Տենչայ Սաթենիկ տիկին Զարտախուր խաւարտ Եւ դտից խաւարծի Ի բարձիցն Արդաւանայ» *մոտիվը համարում է նախատիպը օսական զրույցի, ըստ որի՝ Սաթանան դավաճանում է Վըրըզմագին տնային օջախի և դարրնության աստված Սաֆայի կամ Քվըրդալադոնի (*Kwərdalægon «Ալադյան դարբին»*) հետ*[102]: *Ուշագրավ է, այս առումով, օջախի կրակի օսերեն ծիսական անվանումը՝* Արթխուրոն *(*Ærtxuron*), որը կապվում է* «Տենչայ Սաթենիկ տիկին...» *հատվածի տրտախսուր բառի հետ*[103]: *Ինչ վերաբերում է* «Ճաշ դործեալ Արդաւանայ Ի պատիւ Արտաշիսի, Եւ խարդաւանակ լեալ նմին Ի տաճարին վիշապաց» *պատառիկին, ապա այն գրեթե նույնությամբ կրկնվում է օսական տարբերակում, որտեղ ծերացած Վըրըզմագին նարթերը խաբեությամբ խնջույքի են հրավիրում, խմեցնում և փորձում սպանել*[104]:

Ուշադրավ է, որ խնջույքը կազմակերպվում է Ալագյանների *տանը (*Alægatə xæjarə*), իսկ տանտերը կոչվում է Ալագյան-Ումար, որի անունն օսական զրույցում, հավանաբար, կազմվել է Արդավան Մարացու (Արդամի) անվան հետ բաղաձկմամբ: Ըստ օսերի՝ վրա հասած Սոսլանը, Սոզըրըկոն և Բաթրաձը՝ Սաթանայի որդիները, կոտորում են բոլոր դավադիր նարթերին՝ ազատելով Վըրըզմագին, ինչպես հայոց Արտավազդն է սրի քաշում Արգամին և նրա բոլոր դավակներին: Բաթրաձը սպանվածների բեղերը հատ-հատ հանում է, իսկ Արտաշեսի որդիները «աղմուկ են բարձրացնում և հենց ճաշի ժամանակ քաշում Արգամի ալևոր մազերը» (այլ թարգմանությամբ՝ ալևոր մորուքը)՝ փրկելով իրենց հորը: Սրանով նրանք, կարծես, հանում են նաև իրենց վրեժն այն բանի համար, որ Արգավանը (Արդամը) կամ Ալադյան դարբինը (Սաֆան) գայթակղել էր իրենց մորը, որը տենչալով տենչում էր նրան: Գետային մերձեցման առասպելի օսական մի տարբերակում Սաթանան «հղի քարը» տանում է Ալագյան դարբնի՝ Քվըրդալագոնի մոտ, որն այնտեղից հանում է Սոսլանին, այդպիսով, «երկնային դարբինը» ենթագրվում է որպես Սաթանայի որդու հայր, մի*

---

101 А. Б. Дзадзиты, Х. В. Дзуцаты, С. М. Хъараты. *Նշվ. աշխ., էջ 17–18.*

102 Ж. Дюмезиль, *Նշվ. աշխ., էջ 112.*

103 *Հ. Մարտիրոսյան. «Արտախուր խաւարա»-ի մեկնության նոր փորձ.– ՊԲՀ, 1996, N 1-2, էջ 312-313:*

104 Ж. Дюмезиль. Осетинский эпос и мифологии, с. 54 – 55.

տեղ նա հենց կոչվում է Սոսլանի դաստիարակ (**sqoməl æy kodta ærvon Safa**)[105]:

Ամբողջացնելով ասվածը՝ կարելի է հայ-կովկասյան Սաթենիկ-Սաթանային բնութագրել որպես սիրո և դեղեցկության հեթանոսական աստվածուհու, որը ծնվում է ծովային կույսի և հին երկնային աստծո անօրեն կապից: Սիրո և դեղեցկության աստվածուհու ամուսինը ամպրոպի աստվածն է, իսկ սիրեկանը՝ նրա հակառակորդ «երկնային դարբինը»: Սիրո դիցուհին իր ամուսնու կամ նրա հակառակորդի հետ դետափնյա լոդանքի ժամանակ ունեցած կապից ծնում է մեռնող-հառնող / ժայռում փակված կամ գամված հերոսին, որը խորհրդանշում է կրակը (քարից թռչող կայծերի տեսքով) և արևը (ժայռից կամ ջրից ելնող): Կապված իր ծննդյան մութ հանգամանքների հետ՝ այս հերոսը երկատված կերպար ունի, ինչը, հնարավոր է, որ նաև երկվորյակների առասպելության ազդեցության հետևանք լինի[106] (հաճախադեպ են այն տարբերակները, որտեղ Սաթանան երկու որդի ունի՝ Սոսլան և Սոզըրկո):

Օսական դիցավեպի տարբերակներն առավել, քան մյուս հյուսիսկովկասյան պատումները, ամբողջական են պահել Սաթենիկի, նրա ամուսնու և սիրեկանի մասին առասպելական շարքը: Սաթանան նարթյան պատումներում ստանձնել է նաև նարթերի դյուցազնական գերդաստանի մոր պարտականությունները, նրա կերպարը սերտորեն միահյուսվել է վաղնջական դուշակի և կախարդուհու, դիցակերպ հսկայամարմին մայր աստվածուհու արիաիկ պատկերացումներին, որոնք հատկապես վառ արտահայտված են արևմտակովկասյան (արիազական և ադըղական) տարբերակներում և, ինչպես ենթադրվում է, մայրիշխանության դարաշրջանի արձագանքներ են:

К ВОПРОСУ О ГЕНЕАЛОГИИ ОБРАЗА АРМЯНСКОЙ ЭПИЧЕСКОЙ ЦАРЕВНЫ САТЕНИК

ТОРК ДАЛАЛЯН

Р е з ю м е

Согласно Мовсесу Хоренаци (V в.), во II в. союз, заключенный между армянами и северокавказскими горцами, укрепляется женитьбой царя Великой Армении Арташеса на аланской царевне Сатеник. Передавая легенды и предания, связанные с именем Сатеник, Хоренаци, фактически, намекает на существование в V в. общего армяно-аланского эпического цикла, о котором пишет В.И. Абаев. Образ Сатеник сохранился до наших дней в нартских сказаниях осетин

105 Сказания о нартах, с. 117; А. Б. Д з а д з и т ы, Х. В. Д з у ц ц а т ы, С. М. Х ъ а р а т ы. *Նշվ. աշխ., էջ 122–123, 127. Հայոց Արտավազդը նույնպես պետք է որ ընկալվեր որպես Արդավանի որդի (Ա. Պ ե տ ր ո ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 114):*

106 Л. А. А б р а м я н. Первобытный праздник, с. 167—168.

(Сата́на), абхазов (Сатанэй-Гуаша или Сатания-пха), абазин и убыхов (Сатанеа и Сатания), адыгейских народов, сванов и балкарцев (Сатанэй, Сатанай или Сатаной), вайнахов (Села Сата или Сатай хан). Центральный миф, связанный с кавказской Сата́ной — "речное купанье" и рождение ее сына из черного или синего камня, который как бы, отождествляется с нею. Учитывая это, весьма вероятной кажется версия этимологии, предложенная Гр. Ачаряном, связывающего имя Сатеник с арм. *сат* "янтарь", тем более, что имя Сата́на не имеет ясную этимологию на основе кавказских и осетинского языков. Мнение, высказанное В. И. Абаевым и Ж. Дюмезилем, что цикл сказаний об осетинской Сатане сформировался под влиянием образа армянской царицы, в меньшей степени относится и к сложению мифологического образа нартской героини других северокавказских народов, которые (особенно западнокавказские народы) сохранили множество архаических черт, отсутствующих в армянской исторической традиции. Армяно-кавказская Сатеник-Сата'на представляется как языческая богиня любви и плодородия. Сравнительный анализ кавказских и армянских мифов (миф о рождении Сата'ны, миф о происхождении Млечного пути, миф о "речном купании", миф о рождении сына-героя богоборца) указывает на древность мифического образа нартской центральной героини. В осетинской традиции находим отражение эпических песен армянских бардов V века, а также мифологические образы и сюжеты этих песен — "*Вскочил храбрый царь Арташес на красавца-коня вороного / И, вынув аркан краснокожий с золотым кольцом, / Подобно орлу быстрокрылому перешел через реку...*"; "*Вишапиды выкрали младенца Артавазда / И дэвом заменили его*"; "*Если ты помчишь в охоту / Вверх по склонам Арарата, / Пусть схватят тебя каджии / Вверх по склонам Арарата, / Там да будешь, свет не зря*"; "*Томилась царица Сатиник, / Вожделея желанием страстным / По венечной траве и росткам побегов / Из высот Аргавана*"; "*Аргаван устроил пир / В честь царя Арташеса, / Покусившись на него / Во дворце вишапов*".

ON THE ORIGIN OF THE CHARACTER OF THE ARMENIAN EPIC QUEEN SATENIK

TORK DALALYAN

S u m m a r y

According to Movses Khorenatsi (5th c.), an alliance concluded in the 2nd c. between the Armenians and the North - Caucasian mountaineer tribes is fortified by the marriage of the king of Great Armenia Artashes and the Alanian princess Satenik. Reporting the tales and legends connected with the name of Satenik, Khorenatsi, in fact, hints at the existence in the 5th c. of a common Alano-Armenian epic cycle, about which writes V.I. Abaev. The character of Satenik has been preserved up to our days in the Nart sagas of the Ossetians (Sata'na), the Abkhazes (Sataney-Guasha or Satania-pha), the Abazins and the Ubykhs (Satanea and Satania), the Circassian

peoples, the Svans and the Balkars (Sataney, Satanay or Satanoy), the Vaynakhs (Sela Sata or Satay khan). The central myth of the Caucasian Sata'na is "the river bathing" and the birth of her son from a black or blue stone; which is, as if, identified with her. In this view it seems quite possible the version of the etymology proposed by Hr. Acharian, who derives the name of Satenik from Arm. ***sat'*** "amber"; moreover, the name Sata'na has not a clear etymology on the basis of the Caucasian and the Ossetian languages. V.I. Abacv and G. Dumézil have expressed an opinion that the cycle of the Ossetian Sata'na has been formed under the influence of the character of the Armenian queen; this also concerns, in a less extent, the other North-Caucasian peoples, who, however, (especially the West-Caucasians) have preserved a lot of archaic features, that are absent in the Armenian historical tradition. Armeno-Caucasian Satenik-Satana figures as a heathen Goddess of Love and Fecundity. A comparative analysis of the Caucasian and Armenian myths (myth on the birth of Satana, myth on the extraction of the Milky Way, myth on "the river bathing", myth on the birth of her son, the god-fighting hero) points out at an ancient mythological character of the Nartian central heroine. In the Ossetian tradition we find the reflection of the epic songs of the 5th century Armenian bards, as well as the mythical characters and subjects preserved in these songs – *"Noble King Artashes mounted a beautiful black horse./ And taking a strap of red leather with golden rings/ And crossing the river like a swift-winged eagle..."; "The descendents of the dragons stole the child Artavazd,/ And put a dev in his place"; "If you go hunting/ Up on the Noble Masis,/ The spirits will seize you and take you/ Up on the Noble Masis,/ There you will remain and no more see the light"; "Queen Satenik had great desire/ For the vegetable artakhur and shoot tits/ From the table of Argavan"; "Argavan made a feast/ In honor of Artashes/ And there was a plot against him/ In the temple of the dragons".*